

ևս առաջուանին պէս ըլլալու է: Հաւանականաբար մեր առջեւ ունեցած անօթը երկկողմանի գլան մ'է և պէտք ենք մէջտեղ երկուքի զատող տախտակ մ'երևակայել:

Գլանաձևին երկու բաժանումներն որոշուած էին անշուշտ տարբեր տեսակ նիւթեր բովանդակելու կամ միեւնոյն նիւթին զանազան աստիճաններն և տեսակներն:

Հակառակ իւր ֆիսսութեամբ ըլլալուն այս գլանաձևն կու տայ մեզ դարձեալ բարձր գաղափար մը իտալիական արուեստի ներքութեան և ոսկերիչներու ճաշակի մաքրութեան:

Սակայն բուն մեծ արժէքն այս կտուրիս ուրիշ բանի մը մէջ կը կայանայ:

Այսինքն, յիշեալ փոշին քիմիապէս ցնեց իմ ճանապարհի ընկերակիցս, որուն նախկին հիւղն տարբալուծութիւն էր, և գտաւ թէ այն ծծմբարծաթ է:

Այս արուեստական կերպով պատրաստուած փոշոյ գործածութեան վրայ հիմնուած է Եւրոպայի մէջ Տուլայի (քաղաք Ռուսիոյ) արծաթ կոշուածը: Սպիտակ արծաթի սահուն մակերևոյթը եթէ ծծմբարծաթով աշխատուի, կ'ընդունի մութ գոյն մը: Այս կերպով յառաջ կու գայ նկարակերտումն կամ բանիլը Տուլայ — արծաթի մակերևութին:

Սոյնպիսի Տուլայ գործեր նաև ցայսօր յատկապէս Վանայ մէջ մեծ բազմութեամբ և կարգէ դուրս ներքութեամբ կը պատրաստուին: Վանայ մէջ կարելի է ոսկերիչներն, խանութ առ խանութ, իրենց աշխատած միջոց դիտել: Մեր գտածն կը ցուցնէ թէ հոս ամենահին բնիկ գործի մը շարունակութիւնն է, և թէ նա կաւկասի վրայէն Ռուսաստան անցնելով նոր հայրենիք մը գտած է:

Եթէ հոս գործը բնիկ իտալիական աւրուեստի փոխանցութեան վրայ է, կան ուրիշ պարագայներ ևս, ուր հարաւի քաղաքակրթութիւնը Ռուսաստան անցած է: Այսպէս, Բաքոյնէն դէպ ի կաւկաս տեղափոխուին տախտակի ոստայնանկու-

թեան (Brettchenweberei) և բաքելոնական ոսկեղէն մնասի շարունակուիլն Ռուսաց սովորական ոսկեղրամին վրայ: Այս դէպքերուս մէջ Խաղդի միջնորդի մը դեր խաղացած են:

17. Արծաթեայ երկու փոքր սաներ, որոնք ևս վերի գլանաձևի նման հիւսուածով մը պատուած էին: Սրբա գտնուեցան մատանի մէջ հսկայական կուժի մը տեղւոյն վրայ: Դժբաղդաբար ասոնք Պերլի-նու մէջ կորսուեցան. հաւանականապէս ախտաբանական դպրոցի հրկիզութեան միջոց հալած ոչնչացած են, ուր թօփրացալէի հաւաքածոյին մեծ մասը կը պահուէր:

18. Նմանապէս մատանի մէջ գտնուեցաւ պղնձէ գամ մը, առ նուազն 51 հրդա-մետր երկայն և իբր 0,55ն մինչև 0,9 հրդամետր հաստ: Մէկ ծայրին վրայ ունի 2,5 երկայն և 0,5 հաստ ոսկեղէն գլուխ: Թերեւս ոսկերչաց գործիք մ'ըլլայ:

19. Պղնձէ փոքրիկ անօթներ, կլորակ, բայց մասամբ ետեի կողմերնին տափառակ, իբր պատէն կախուելու որոշուած ըլլային:

Թրգմ. Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ



Ի Մ Ա Ս Տ Ն Ե Ր

Քոստիրը դրամներու կը նմանի՝ ոյսնց տես կամ ձիւտ ջլլալը իրենց հսկած ձայնէրէն կը ձանցուի: (M. Choppy)

Յնդափոխութիւնը՝ պատկերազմ մ'է ժնաւի ուղղի և մեանի լուզող աշխարհի մը մէջ: (G. M. Voltour)

Մայրու մը շրջանը բնէն իմաստ՝ սա նուազն մեկ օր ժամանակ պէտք է: (Ռուսաւ կան ասած):

Միտրը վուս տնիստնմութեանց կ'ասալ-նորպէ, գլուխը միայն կը կասավարէ: (F. Fabre)

Իմաստի վեմութիւնը միշտ կ'ունենայ նաև նսնութիւն, ինչպէս բարձր լեաները աղօտ տեսք մը կ'ունենան:

Մայրաքաղաք կեանքը՝ երկայն քուն մ'է, և սեւը՝ վաղանցուկ երազ մը: